մասուռի շինության հետ չեն կապված։

Մասուռի արևելյան ճակատին, փոքրիկ լուսամուտի գլխին, տանիքի կողերի միացմամբ կազմված անկյունն ամբողջապես զարդարված է քանդակներով (պատկ. 51). վերևը մի պտտող սվաստիկա, նորա տակ թևատարած արծիվը մագիլների մեջ բռնել է մի խոյ, արծվի յերկու կողմից մի մի սիրամարգ, վորոնցից աջ կողմինն ամբողջապես զարձած է դեպի արծիվը, իսկ մյուսը դեպի ձախ ուղղված, բայց թեքել է գլուխը դարձյալ դեպի արծիվը։ Քանդակի մնացած մասը, բուսական, դեկորատիվ զարդեր են։

Գյաբրդ կամ Վերին Ախտա գյուղում, վոր գտնըվում է գետակի մյուս կողմը, աջ ափին, ձորամիջի մի բարձր ժայռի գլխին կա փոքրիկ յեկեղեցի, իսկ ժայռի յերեսը ծածկված է բազմաթիվ խաչաքանդակներով։ Զալալյանի տեսած «մահարձանը» քառանկյունի, սյունաձև մի կոթող է, 3,2 մետր յերկարությամբ, կողերը 60×50 սմ., վոր հաստատված է յեղել պատվանդանի վերա, իսկ գագաթը պսակված պատրհանաձև (փակ, կեղծ պատուհան) մի քարով, յուր կարգին հաստատված 0,6×0,83 պատվանդանի վերա. քարի յերեսը ծածկված է այժմ անընթեռնելի գրով, իսկ քարի վերա հաստատված է Տիրամոր պատկերը «ի գրկի ունելով զՓրկիչն աշխարհի»։ Վերոհիշյալ ժայռից քիչ հարավ կանգուն են մի շարք խաչքարեր, մի քանիսը մեզ համար կարևոր արձանագրություններով և 1261, 1266 և 1271 թվականներով, վոր տարաբաղդաբար յերեկոյանալու պատճառով լուսանկարել չկարողացանք։

Դոցանից առաջինը կոտրած է. ներքևի մասում ունի հետևյալ արձանագրությունը. «ի թվ. ՉԺԱ. / ի յիշխանութեանս Պռո/շոյ ես Մխիթար ու Դեղս կա/նգնեցաք զխաչս եղբաւր մերոյ / Շաշին ի բարէխաւս»։

Յերկրորդ խաչքարն ունի 2,6×1,22 մետր մեծություն, հետևյալ արձանագրությամբ. «ի թվիս ՉԺԵ. ես Ղուկաս եւ Եղիա կա/նգեցաք զխաչս ի բար/էխաւսութի հաւր իմոյ Տիրատէր քահան ի/շխանութիւն (ի չի կրկնված) Պռոշայ» *։

Յերրորդը կից է սորան 1,85×1,5 մ. մեծությամբ. «Ի թվ. հ. ՉՃԻ։ իշխան/ութիւն Պռոշոյ / կամաւն այ (աստուծոյ) ես Սարգիս Գրիգոր կանգնեց/աք զխաչս ի բար[ե]/խաւս մեզ և զա(ւակաց) կդկք ?

Ըստ Զալալյանի այս գյուղում պետք է յեղած լինի մի ուրիշ խաչքար ՉԼԵ=1286 թվից, «Ի Դեղէ, յիշխանութեան Պռոշոյ և Ամիր Հասանայ», վոր մենք գտնել չկարողացանք։

Պռոշի մահը Մխիթար Այրիվանեցին նշանակում է 1281 թվից հետո և Արղունի թագավորելուց (1284 թվին) առաջ. «Փոխեցան ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն Պռոշ և Սադուն Արծրունի» **. սակայն հաստատ գիտենք, թե նա կենդանի յեր 1283 թվին Գեղարդի մեծ արձանագրության համեմատ (տ. Հավել. Ա. 17), Բայց մի անծանոթ ժամանակագիր Սադունի մահը վորոշ կերպով նշանակում է 1285 թվին [1]. Որբել-

Պռոշյանց դարբասի դրան ճակատարարը, Բաշբյանդում. **պատկեր 49.**

* Զալ. Բ. 205. Ալիշան 175։ Սոքա չունին արձանագրությունների բնագիրները։

** Այրիվանեցի 68։

1 Սամուել Անեցի. շարունակ. յեր. 163. Շողակաթ. յեր. 26։